# <<ԵԳՊԱ>> ՊՈԱԿ-Ի ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ <<ԻՆՏԵՐՆԵՏԱՅԻՆ ԿԱՊԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ>> ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N <<ԵԳՊԱ-ՇՀԾՁԲ-15/1-16/14>>

ք. Երևան

<<18>> հունվարի 2017թ.

<<Երևանի գեղարվեստի պետական ակադեմիա> ՊՈԱԿ, ի դեմս ռեկտոր Արամ Իսաբեկյանի, ով գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Յուքոմ>> ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության կորպորատիվ վաճառքի բաժնի ղեկավար Կ.Ասատուրյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է <<Ինտերնետային կապի տրամադրման>> ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

### 2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

### 2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

### 2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

### 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (Հավելված N 3) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 3.1):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 5 օրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

### 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում է 240 000 (երկու հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից:

### 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[1]:

---

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Արգելվում է սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել

այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող Ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.4 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև սույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

7.5 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.6 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.7 Սույն պայմանագիրը կազմված է **5** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.8 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.9 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ու**

<<Երևանի գեղարվեստի պետական ակադեմիա>> ՊՈԱԿ
ք. Երևան, Իսահակյան 36
ՀՎՀՀ 01505555
Հ/Հ 11815000774800
<<Անելիք բանկ>> ՓԲԸ
<<Տիգրան Մեծ>> մ/ճ

Ռեկտոր՝ Ա. Իսաբեկյան ________________
(ստորագրություն)
Կ.Տ

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**

<<Յուքոմ>>ՍՊԸ
ք. Երևան, Տերյան 19, բն.4
<<Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան>>ՓԲԸ
Հ/Հ 217001264993001
ՀՎՀՀ 00024873

Կորպորատիվ վաճառքի բաժնի ղեկավար՝ Կ.Ասատրյան ________________
(ստորագրություն)
Կ.Տ

*Հավելված 1*
*<<18>> << հունվարի>> 2017թ. կնքված*
N <<ԵԳՊԱ-ՇՀԾՁԲ-15/1-16/14>> *ծածկագրով գնման պայմանագրի*

**ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ**

<table>
<tr><td colspan="2">Ձեռքբերվող Ծառայության նկարագիր</td></tr>
<tr><td colspan="2">ՀՀ, ք. Երևան, Իսահակյան 36 «Երևանի գեղարվեստի պետական ակադեմիա» ՊՈԱԿ վարչական շենք և ՀՀ, ք. Երևան, Ջրաշատ 1 հասցեներում առանձնացված օպտիկամանրաթելային մալուխով ինտերնետ կապի տրամադրում, /3 միջազգային աշխարհագրորեն իրարից անկախ ֆիզիկակական մալուխային համակարգերով ինտերնետ սնուցման առկայություն/: Մատակարարը պետք է ունենա Բաժանորդների սպասարկման ծառայություն (Help Desk), ինչպես նաև իրականացնի ծառայության վերահսկում (մոնիթորինգ)՝ 24 ժամ և 7 օր ռեժիմով: Մատակարարը պետք է պատվիրատուին հնարավորություն տրամադրի ինքնուրույն հսկելու ծառայության աշխատանքը՝ օգտագործելով մատակարարի կողմից տրամադրված հասանելիությունը համապատասխան համակարգին, որի միջոցով տեսանելի կլինի ծառայության օգտագործման տրաֆիկի իրական պատկերը: Մատակարարի ցանցի հնարավոր անսարքությունները շտկելու համար մատակարարը պետք է ունենա համապատասխան տեխնիկական սպասարկման անձնակազմ, որի կողմից պետք է անհապաղ գործարկվեն համապատասխան ընթացակարգեր սպասարկման միջցառումների և կապի հնարավորինս արագ վերականգնումը ձեռնարկելու համար: Մատակարարը պետք է տրամադրի 16 REAL STATIC IP հասցեներ (երկու խումբ 8+8):</td></tr>
<tr><td colspan="2">Ծառայության մատուցման ժամկետը</td></tr>
<tr><td>Սկիզբը</td><td>Ավարտը</td></tr>
<tr><td>Պայմանագիրը կնքելու օրը</td><td>31.12.2017թ.</td></tr>
</table>

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ**
<<Երևանի գեղարվեստի պետական ակադեմիա>> ՊՈԱԿ
ք. Երևան, Իսահակյան 36
ՀՎՀՀ 01505555
Հ/Հ 11815000774800
<<Անելիք բանկ>> ՓԲԸ
<<Տիգրան Մեծ>> մ/ճ

Ռեկտոր՝ Ա. Իսաբեկյան ____________
(ստորագրություն)
Կ.Տ

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**
<<Յուքոմ>>ՍՊԸ
ք. Երևան, Տերյան 19, բն.4
<<Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան>>ՓԲԸ
Հ/Հ 217001264993001
ՀՎՀՀ 00024873

Կորպորատիվ վաճառքի բաժնի ղեկավար՝ Կ.Ասատուրյան ____________
(ստորագրություն)
Կ.Տ

*Հավելված 2*
*<<18>> << հունվարի>> 2017թ. կնքված*
*N <<ԵԳՊԱ-ՇՀԾՁԲ-15/1-16/14>> ծածկագրով գնման պայմանագրի*

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| N | Ծառայության անվանումը | Նախատեսվում է ֆինանսավորել 2017թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը Տարի |
| 1. | Ինտերնետային կապի տրամադրման ծառայություն | 20 000 | 40 000 | 60 000 | 80 000 | 100 000 | 120 000 | 140 000 | 160 000 | 180 000 | 200 000 | 220 000 | 240 000 | **240 000** |

* *Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:*

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ**
<<Երևանի գեղարվեստի պետական ակադեմիա>> ՊՈԱԿ
ք. Երևան, Իսահակյան 36
ՀՎՀՀ 01505555
Հ/Հ 11815000774800
<<Անելիք բանկ>> ՓԲԸ
<<Տիգրան Մեծ>> մ/ճ

Ռեկտոր՝ Ա. Իսաբեկյան ______________
(ստորագրություն)
Կ.Տ

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**
<<Յուքոմ>>ՍՊԸ
ք. Երևան, Տերյան 19, բն.4
<<Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան>>ՓԲԸ
Հ/Հ 217001264993001
ՀՎՀՀ 00024873

Կորպորատիվ վաճառքի բաժնի ղեկավար՝ Կ. Սաստուրյան ______________
(ստորագրություն)
Կ.Տ

*Հավելված 3*

*<<18>> << հունվարի>> 2017թ. կնքված*

N <<ԵԳՊԱ-ՇՀԾՁԲ-15/1-16/14>> *ծածկագրով գնման պայմանագրի*

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| __________________________ | __________________________ |
| __________________________ | __________________________ |
| գտնվելու վայրը _____________ | գտնվելու վայրը ________________ |
| հհ _______________________ | հհ_________________________ |
| __________________________ | __________________________ |
| հվհհ ______________________ | հվհհ________________________ |

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
## ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_______________________________________________________________________________________________________

_______________________________________________________________________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «__________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ __________
Պատվիրատուն՝ ի դեմս _____________________________________________________________ և Պայմանագրի կողմը՝ ի դեմս___________________________________________________________, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «__________________» 20 թ. կազմված գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

| N | Մատուցված ծառայությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | | |
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Ծառայությունը հանձնեց | Ծառայությունն ընդունեց |
|---|---|
| ____________________ | ____________________ |
| ստորագրություն | ստորագրություն |
| ____________________ | ____________________ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |

*Հավելված 3.1*
*<<18>> <<հունվարի>> 2017թ. կնքված*
N <<ԵԳՊԱ-ՇՀԾՁԲ-15/1-16/14>> *ծածկագրով գնման պայմանագրի*

# ԱԿՏ N

## պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ -------------------------ի (այսուհետ՝ Պատվիրատու) և

(Պատվիրատուի անունը)

-------------------------------ի (այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ------- -ին կնքված N -----------------

(Կատարողի անունը)

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. ----------- -- -ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|---|---|---|
| **Անվանումը** | **Քանակական ցուցանիշը (փաստացի)** | **Չափի միավորը** |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

______________________
ազգանուն, անուն

______________________
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

______________________
ազգանուն, անուն

______________________
ստորագրություն

| Կատարող | Պատվիրատու |
|---|---|
| «Յուքոմ» ՍՊԸ<br>ք.Երևան, «Երևան Պլազա» բիզնես կենտրոն,<br>Գրիգոր Լուսավորիչ 9<br>«Ամերիաբանկ» ՓԲԸ<br>Հ/Հ 1570043102134100<br>ՀՎՀՀ 00024873 | «Երևանի գեղարվեստի պետական ակադեմիա» ՊՈԱԿ<br>ք. Երևան, Իսահակյան 36<br>«Անելիք բանկ» ՓԲԸ Կենտրոն մ/ճ<br>Հ/Հ 11815000774800<br>ՀՎՀՀ 01505555 |

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1
## ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«31» «հունվար» 2017թ.

Պայմանագրի անվանումը՝ «ԵԳՊԱ» ՊՈԱԿ-ի կարիքների համար «Ինտերնետային կապի տրամադրման» ծառայության մատուցման գնման պայմանագիր

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ 18.01.2017թ.

Պայմանագրի համարը N ԵԳՊԱ-ՇՀԾՁԲ-15/1-16/1

Պատվիրատուն՝ ի դեմս «Երևանի գեղարվեստի պետական ակադեմիա» ՊՈԱԿ-ի ռեկտոր Ա. Իսաբեկյանի և Կատարողը՝ ի դեմս «Յուքոմ» ՍՊԸ-ն գլխավոր տնօրեն Հ. Եսայանի, հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «____________» 20 թ. կազմված գնման ռայտը նախագծած ներկայացուցչի N___ եզրակացությունն այն մասին, որ պայմանագրով նախատեսված տորև նշված ծառայությունները համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում կատարողը 01.01.2017թ-ից 31.01.2017թ ընկած ժամանակահատվածում մատուցել է հետևյալ ծառայությունները՝

| N | Մատուցված ծառայությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրի հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրի հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| 1 | Ինտերնետ կապի տրամադրման ծառայություն | առանձնացված օպտիկամանրաթելային մալուխով ինտերնետ կապի տրամադրում, մատակարարը պետք է տրամադրի 16REAL STATIC IPհասցեներ | 1 | - | 18.01.2017թ<br>31.12.2017թ | 18.01.2017թ<br>31.01.2017թ | 20.0 | փետրվար 2017թ. |

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| | |
|---|---|
| Ծառայությունը հանձնեց<br>«Յուքոմ» ՍՊԸ<br>Համախորդների սպասարկման բաժնի ղեկավար Ա. Հովհաննիսյան<br>Կ.Տ | Ծառայությունն ընդունեց<br>(ստորագրություն)<br>ազգանուն<br>Կ.Տ |

Ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման հարկային հաշիվ Ա6635957719

# Հարկային հաշիվ
(ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման)

| [1] Դուրս գրման ամսաթիվ | | | [2] Սերիա | [3] Համար |
|---|---|---|---|---|
| 13 | Փետրվար | 2017 թ | Ա | 6635957719 |

| [4] Մատակարարման ամսաթիվ | | | Կարգը (անհրաժեշտության դեպքում վանդակում նշել «X») | Խառուկ | Ճշգրտվող հաշվի | |
|---|---|---|---|---|---|---|
| 31 | Հունվար | 2017 թ | | | Սերիա | Համար |
| | | | | | Ճշգրտվող հաշվի դուրս գրման ամսաթիվ | |

| Պայմանագիր | [5] Կնքման ամսաթիվ | [6] Համար | |
|---|---|---|---|
| | 18 Հունվար, 2017 թ | ԵԳՊԱ-ԾՁՁԲ-15/1-16/1 | [7] |
| | | | [8] |
| | | | [9] |

[10] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

Վճարման կատարել 1570043102134100 2/2-ին, նպատակ դաշտում նշել ID05301611D

## Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի

| | |
|---|---|
| [11] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) | 0 0 0 2 4 8 7 3 |
| [12] Անվանումը | «ՅՈՒՔՈՄ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (ՍՊԸ) |
| [13] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը | 0 0 0 2 4 8 7 3 / 1 |
| [14] Բանկային տվյալները | Էյչ-Էս-Բի-Սի բանկ Հայաստան N 217001264993001 |
| [15] Գտնվելու վայրը (հասցեն) | ԿԵՆՏՐՈՆ ՏԵՐՅԱՆ Փ. 19 շ. 4 բն |
| [16] Լրացուցիչ տվյալներ | |

## Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի

| | |
|---|---|
| [17] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը) | 0 1 5 0 5 5 5 5 |
| [18] Անվանումը | «ԵՐԵՎԱՆԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ» Պետական ոչ առևտրային կազմակերպություն (ՊՈԱԿ) |
| [19] Բանկային տվյալները | Անեփե բանկ N 11815000774800 |
| [20] Գտնվելու վայրը (հասցեն) | ԿԵՆՏՐՈՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ Փ. 36 |
| [21] Լրացուցիչ տվյալներ | |

| [22] Ում միջոցով | Անուն, ազգանուն | |
|---|---|---|
| | Լիազորագիր | Համար |
| | | Ամսաթիվ |

[23] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

| N | Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (բովանդակությունը) | Չափման միավորը | Քանակը (ծավալը) (ժամկետը) | Միավորի գինը | Արժեքը | ԱԱՀ դրույքաչափը (%) | ԱԱՀ գումարը | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
| 1 | Ինտերնետ կապի տրամադրման ծառայություն | ամիս | 1 | 16666.67 | 6666.67 | 20 | 3333.33 | 20000 |
| Ընդամենը | | | | | 6666.67 | X | 3333.33 | 20000 |

Դուրս գրող` IKHTIARYAN GRIGOR 2507900776
անունը, ազգանունը

Ստացող

պաշտոնը ստորագրությունը (անունը, ազգանունը)

պաշտոնը ստորագրությունը (անունը, ազգանունը)

«ՅՈՒՔՈՄ» «UCOM» LIMITED LIABILITY COMPANY 00024873

FOR DOCUMENTS 01505555

13/02/2017 10:45:38

Կատարող
«Յուքոմ» ՍՊԸ
ք.Երևան, «Երևան Պլազա» բիզնես կենտրոն,
Գրիգոր Լուսավորիչ 9
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570043102134100
ՀՎՀՀ 00024873

Պատվիրատու

«Երևանի գեղարվեստի պետական ակադեմիա» ՊՈԱԿ
ք. Երևան, Իսահակյան 36
«Անելիք բանկ» ՓԲԸ Կենտրոն մ/ճ
Հ/Հ 11815000774800
ՀՎՀՀ 01505555

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 02
# ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«28» «փետրվար» 2017թ.

Պայմանագրի անվանումը՝ «ԵԳՊԱ» ՊՈԱԿ-ի կարիքների համար «Ինտերնետային կապի տրամադրման» ծառայության մատուցման գնման պայմանագիր
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ 18.01.2017թ.
Պայմանագրի համարը N ԵԳՊԱ-ՇՀԾՁԲ-15/1-16/14

Պատվիրատուն՝ ի դեմս «Երևանի գեղարվեստի պետական ակադեմիա» ՊՈԱԿ-ի ռեկտոր Ա. Իսաբեկյանի և Կատարողը՝ ի դեմս «Յուքոմ» ՍՊԸ-ն գլխավոր տնօրեն Հ. Եսայանի, հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «28» «փետրվար» 2017թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N02 եզրակացությունն այն մասին, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Կատարողը 01.02.2017թ-ից 28.02.2017թ ընկած ժամանակահատվածում մատուցել է հետևյալ ծառայությունները՝

| N | Մատուցված ծառայությունների | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | Անվանումը տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | ըստ պայմանագրի հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրի հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| 1 | Ինտերնետ կապի տրամադրման ծառայություն | 1 | 1 | 18.01.2017թ<br>31.12.2017թ | 01.02.2017թ<br>28.02.2017թ | 20.0 | մարտ 2017թ. |
| | | | | | Ընդամենը՝ | 20.0 | |

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց
«Յուքոմ» ՍՊԸ
Հաճախորդների սպասարկման բաժնի
ղեկավար՝ Ա. Հովհաննիսյան

Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց
(ստորագրություն)
ազգանուն

Կ.Տ

Ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման հարկային հաշիվ — Ա0067403736

# Հարկային հաշիվ
(ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման)

| [1] Դուրս գրման ամսաթիվ | | |
|---|---|---|
| 10 | Մարտ | 2017 թ. |
| **[4] Մատակարարման ամսաթիվ** | | |
| 28 | Փետրվար | 2017 թ. |

| [2] Սերիա | [3] Համար |
|---|---|
| Ա | 0067403736 |

Կարգը (անհրաժեշտության դեպքում վանդակում նշել «X») | հատուկ |

| Ճշգրտվող հաշվի | |
|---|---|
| Սերիա | Համար |
| | |
| Ճշգրտվող հաշվի դուրս գրման ամսաթիվ | |

| Պայմանագիր | [5] Կնքման ամսաթիվ | [6] Համար | |
|---|---|---|---|
| | 18 Հունվար, 2017 թ. | ԵԳՊԱ-ՇՀԾՁԲ-15/1-16/14 | [7] |
| | | | [8] |
| | | | [9] |

[10] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

Վճարումը կատարել 1570043102134100 Հ/Հ-ին, նպատակ դաշտում նշելով ID0530161ID

## Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձ

| | |
|---|---|
| [11] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) | 0 0 0 2 4 8 7 3 |
| [12] Անվանումը | «ՅՈՒՔՈՄ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (ՍՊԸ) |
| [13] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը | 0 0 0 2 4 8 7 3 / 1 |
| [14] Բանկային տվյալները | Էյչ-Էս-Բի-Սի բանկ Հայաստան — N 217001264993001 |
| [15] Գտնվելու վայրը (հասցեն) | ԿԵՆՏՐՈՆ ՏԵՐՅԱՆ Փ. 19 շ. 4 բն. |
| [16] Լրացուցիչ տվյալներ | |

## Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձ

| | |
|---|---|
| [17] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը) | 0 1 5 0 5 5 5 5 |
| [18] Անվանումը | «ԵՐԵՎԱՆԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ» Պետական ոչ առևտրային կազմակերպություն (ՊՈԱԿ) |
| [19] Բանկային տվյալները | Անելիք բանկ — N 11815000774800 |
| [20] Գտնվելու վայրը (հասցեն) | ԿԵՆՏՐՈՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ Փ. 36 |
| [21] Լրացուցիչ տվյալներ | |

| [22] Ում միջոցով | | |
|---|---|---|
| | Անուն, ազգանուն | |
| | Լիազորագիր — Համար | |
| | Լիազորագիր — Ամսաթիվ | |

[23] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

| N | Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (բովանդակությունը) | Չափման միավորը | Ընդհանուր ծավալը (փաստացի) (ժամկետը) | Միավորի գինը | Արժեքը | ԱԱՀ դրույքաչափը (%) | ԱԱՀ գումարը | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
| 1 | Ինտերնետ կապի տրամադրման ծառայություն | ամիս | 1 | 16666.67 | 16666.67 | 20 | 3333.33 | 20000 |
| Ընդամենը | | | | | 16666.67 | X | 3333.33 | 20000 |

Դուրս գրող՝ IKHTIARYAN GRIGOR 2501900716

անունը, ազգանունը

Ստացող

պաշտոնը ստորագրությունը (անունը, ազգանունը)

պաշտոնը ստորագրությունը (անունը, ազգանունը)

10/03/2017 16:52:34

**Կատարող**

"Յուքոմ" ՍՊԸ
ք. Երևան, "Երևան Պլազա" բիզնես կենտրոն,
Գրիգոր Լուսավորիչ 9
"Ամերիաբանկ" ՓԲԸ
Հ/Հ 1570043102134100
ՀՎՀՀ 00024873

**Պատվիրատու**

«Երևանի գեղարվեստի պետական ակադեմիա» ՊՈԱԿ
ք. Երևան, Իսահակյան 36
«Անելիք բանկ» ՓԲԸ կենտրոն մ/ճ
Հ/Հ 11815000774800
ՀՎՀՀ01505555

## Արձանագրություն N03
Հանձնման-Ընդունման

31 "մարտ" 2017 թ.

Պայմանագրի անվանումը՝ ԵԳՊԱ ՊՈԱԿ-ի կարիքների համար Ինտերնետային կապի տրամադրման ծառայության մատուցման գնման պայմանագիր

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ 18.01.2017
Պայմանագրի համարը՝ ԵԳՊԱ-ՇՀԾՁԲ-15/1-16/14
Պատվիրատուն՝ ի դեմս «Երևանի գեղարվեստի պետական ակադեմիա» ՊՈԱԿ-ի պայմանագրի կողմը՝ ի դեմս "Յուքոմ" ՍՊԸ-ի, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ 31 "մարտ" 2017թ. կազմված գնման հայտը ներկայացուցչի N03 եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված ՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին. Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը 01.03.2017-31.03.2017 մատուցել է հետևյալ ծառայությունները

| N | Անվանումը | Մատուցված Ծառայությունների | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Քանակական ցուցանիշը | | Կատարման ժամկետը | | | |
| | | Տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | Ըստ պայմանագրի հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | Ըստ պայմանագրի հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարմ ժամկետ /ըստ վճարմ ժամանա ցույցի |
| 1 | Ինտերնետ կապի տրամադրման ծառայություն | --- | 1 | 1 | 18.01.2017 31.12.2017 | 01.03.2017 31.03.2017 | 20.0 | 2-րդ եռամսյակ |
| 2 | --- | --- | --- | --- | --- | --- | | --- |
| 3 | --- | --- | --- | --- | --- | --- | | --- |
| | | | | | | Ընդամենը՝ | 20.0 | |

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

**Ծառայությունը հանձնեց**

Հաճախորդների սպասարկման տնօրեն
Ա. Հովհաննիսյան

ստորագրություն

Կ.Տ.

**Ծառայությունն ընդունեց**

ազգանուն, անուն

ստորագրություն

Կ.Տ.

| [1] Դուրս գրման ամսաթիվ | | | Հարկային հաշիվ (ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման) | [2] Սերիա | [3] Համար |
|---|---|---|---|---|---|
| 11 | Ապրիլ | 2017 թ. | | Ա | 7695634571 |
| [4] Մատակարարման ամսաթիվ | | | | | |
| 31 | Մարտ | 2017 թ. | Կարգը (անհրաժեշտության դեպքում վանդակում նշել «X») | հատուկ | Ճշգրտվող հաշվի |
| | | | | Սերիա | Համար |
| | | | | | |
| | | | | Ճշգրտվող հաշվի դուրս գրման ամսաթիվ | |

| Պայմանագիր | [5] Կնքման ամսաթիվ | [6] Համար | |
|---|---|---|---|
| | 18 Հունվար, 2017 թ. | ԵԳՊԱ-ՇՀԾՁԲ-15/1-16/14 | [7] |
| | | | [8] |
| | | | [9] |

[10] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

Վճարումը կատարել1570043102134100 Հ/Հ-ին, նպատակ դաշտում նշելով ID0530161ID

## Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի

| | |
|---|---|
| [11] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) | 0 0 0 2 4 8 7 3 |
| [12] Անվանումը | «ՅՈՒՔՈՄ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (ՍՊԸ) |
| [13] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը | 0 0 0 2 4 8 7 3 / 1 |
| [14] Բանկային տվյալները | ԱմերիաԲանկ ՓԲԸ — N 1570043102134100 |
| [15] Գտնվելու վայրը (հասցեն) | ԿԵՆՏՐՈՆ ՏԵՐՅԱՆ Փ. 19 շ. 4 բն. |
| [16] Լրացուցիչ տվյալներ | |

## Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի

| | |
|---|---|
| [17] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը) | 0 1 5 0 5 5 5 5 |
| [18] Անվանումը | «ԵՐԵՎԱՆԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ» Պետական ոչ առևտրային կազմակերպություն(ՊՈԱԿ) |
| [19] Բանկային տվյալները | Անելիք բանկ — N 11815000774800 |
| [20] Գտնվելու վայրը (հասցեն) | ԿԵՆՏՐՈՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ Փ. 36 |
| [21] Լրացուցիչ տվյալներ | |
| [22] Ում միջոցով | Անուն, ազգանուն: |
| | Լիազորագիր — Համար: |
| | Լիազորագիր — Ամսաթիվ: |

[23] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

| N | Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (բովանդակությունը) | Չափման միավորը | Ընդհանուր ծավալը (մատակարարման քանակը) | Միավորի գինը | Արժեքը | ԱԱՀ դրույքաչափը (%) | ԱԱՀ գումար | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
| 1 | Ինտերնետ կապի տրամադրման ծառայություն | ամիս | 1 | 16666.67 | 16666.67 | 20 | 3333.33 | 20000 |
| Ընդամենը | | | | | 16666.67 | X | 3333.33 | 20000 |

Դուրս գրող՝ IKHTIARYAN GRIGOR 2507900776

անունը, ազգանունը

Ստացող

պաշտոնը ստորագրությունը (անունը, ազգանունը)

պաշտոնը ստորագրությունը (անունը, ազգանունը)

11/04/2017 11:25:30

**Կատարող**

“Յուքոմ” ՍՊԸ
ք. Երևան, “Երևան Պլազա” բիզես կենտրոն
Գրիգոր Լուսավորիչ 9
“Ամերիաբանկ” ՓԲԸ
Հ/Հ 1570043102134100
ՀՎՀՀ 00024873

**Պատվիրատու**

"Երևանի գեղարվեստի պետական ակադեմիա" ՊՈԱԿ
ք. Երևան, Իսահակյան 36
"Անելիք Բանկ" ՓԲԸ Կենտրոն մ/ճ
Ƅ/Ƅ 11815000774800
ՀՎՀՀ01505555

# Արձանագրություն N04

Հանձման-ընդունման

30 "ապրիլ" 2017 թ.

Պայմանագրի անվանումը՝ ԵԳՊԱ ՊՈԱԿ-ի կարիքների համար ինտերնետային կապի տրամադրման ծառայությունների մատուցման գնման պայմանագիր

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ 18.01.2017
Պայմանագրի համարը՝ ԵԳՊԱ-ՇՀԾՁԲ-15/1-16/14
Պատվիրատուն՝ ի դեմս "Երևանի գեղարվեստի պետական ակադեմիա" ՊՈԱԿ-ի ռեկտեր՝ Ա. Իսաբեկյանի և Պայմանագրի կողմը՝ ի դեմս “Յուքոմ” ՍՊԸ-ի հաճախորդների սպասարկման տնօրեն՝ Ա. Հովհաննիսյանի, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ 30 "ապրիլ" 2017թ. կազմված գնման հայտը նախագծած ներկայացուցչի N04 եզրակացությունն այն մասին, որ պայմանագրով նախատեսված ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին. Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը 01.04.2017-30.04.2017 մատուցել է հետևյալ ծառայությունները.

| N | Մատուցված ծառայությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | վճարման ենթակա գումարը /հազար դրամ// | վճարմ ժամկետ /ըստ վճարմ ժամանա ցույցի |
| | | | ըստ պայմանագրի հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրի հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| 1 | Ինտերնետային կապի տրամադրման ծառայություն | --- | 1 | 1 | 18.01.2017 31.12.2017 | 01.04.2017 30.04.2017 | 20.0 | 2-րդ եռամսյակ |
| 2 | --- | --- | --- | --- | --- | --- | | --- |
| 3 | --- | --- | --- | --- | --- | --- | | --- |
| | | | | | | Ընդամենը՝ | 20.0 | |

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

**Ծառայությունը հանձնեց**

Հաճախորդների սպասարկման տնօրեն
Ա. Հովհաննիսյան

ստորագրություն

Կ.Տ.

**Ծառայությունը ընդունեց**

ազգանուն, անուն

ստորագրություն

Կ.Տ.

«ՅՈՒՔՈՄ» «UCOM» 00024873 LIMITED LIABILITY COMPANY

FOR DOCUMENTS 01505555

| [1] Դուրս գրման ամսաթիվ | | | Հարկային հաշիվ (ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման) | | [2] Սերիա | [3] Համար |
|---|---|---|---|---|---|---|
| 11 | Մայիս | 2017 թ. | | | Ա | 8157576506 |
| [4] Մատակարարման ամսաթիվ | | | Կարգը (անհրաժեշտության դեպքում վանդակում նշել «Χ») | հատուկ | Ճշգրտվող հաշվի | |
| 30 | Ապրիլ | 2017 թ. | | | Սերիա | Համար |
| | | | | | | |
| | | | | | Ճշգրտվող հաշվի դուրս գրման ամսաթիվ | |
| | | | | | | |

| Պայմանագիր | [5] Կնքման ամսաթիվ | [6] Համար | | |
|---|---|---|---|---|
| | 18 Հունվար, 2017 թ. | ԵԳՊԱ-ՇՀԾՁԲ-15/1-16/14 | [7] | |
| | | | [8] | |
| | | | [9] | |

[10] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

Վճարումը կատարել 1570043102134100 Հ/Հ-ին, նպատակ դաշտում նշել ID0530161ID

| Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձ | | |
|---|---|---|
| [11] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) | 0 0 0 2 4 8 7 3 | |
| [12] Անվանումը | «ՅՈՒՔՈՄ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (ՍՊԸ) | |
| [13] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը | 0 0 0 2 4 8 7 3 / 1 | |
| [14] Բանկային տվյալներ | Ամերիաբանկ ՓԲԸ | N 1570043102134100 |
| [15] Գտնվելու վայրը (հասցեն) | ԿԵՆՏՐՈՆ ՏԵՐՅԱՆ Փ. 19 շ. 4 բն. | |
| [16] Լրացուցիչ տվյալներ | | |

| Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձ | | | |
|---|---|---|---|
| [17] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը) | 0 1 5 0 5 5 5 5 | | |
| [18] Անվանումը | «ԵՐԵՎԱՆԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ» Պետական ոչ առևտրային կազմակերպություն (ՊՈԱԿ) | | |
| [19] Բանկային տվյալները | Անելիք բանկ | N 11815000774800 | |
| [20] Գտնվելու վայրը (հասցեն) | ԿԵՆՏՐՈՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ Փ. 36 | | |
| [21] Լրացուցիչ տվյալներ | | | |
| [22] Ում միջոցով | Անուն, ազգանուն | | |
| | Լիազորագիր | Համար | |
| | | Ամսաթիվ | |

[23] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

| N | Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (բովանդակությունը) | Չափման միավորը | [illegible] | Միավորի գինը | Արժեքը | ԱԱՀ դրույքաչափը (%) | ԱԱՀ գումար | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
| 1 | Ինտերնետ կապի տրամադրման ծառայություն | ամիս | 1 | 16666.67 | 16666.67 | 20 | 3333.33 | 20000 |
| Ընդամենը | | | | | 16666.67 | X | 3333.33 | 20000 |

Դուրս գրող՝ IKHTIARYAN GRIGOR 2507900776

անունը, ազգանունը

Ստացող

ստորագրությունը պաշտոնը (անունը, ազգանունը)

ստորագրությունը պաշտոնը (անունը, ազգանունը)

11/05/2017 10:32:50